

ԱՂԵՐՍԱՆՔ ՊՈՐՄԿԱՀԱՅԻ.

Պարսկահայ եմ, միշտ խնդրեմ՝ օդնէ դու մեզ Տէր Աստուած,

Վանդուկիս ու ուրիշ խորշերում մի օք կանս մեղի այց:

Եւրոպացի մեր եղբարց պղորմութիւն արեղիր,

Տեսակ տեսակ ուսմունքներ նորանց առատ տվեցիր:

Ի նշ արեցին մեր նախնիք որ մեղմէ փախաւ բարին,

Եւր առատօրէն պարզեւր էլ չի տալի մեր Հային:

Հին ժամանակ շատ կ'տար, — բայց իմանաս թէ որին:

Եղած էր նա սիրելի նախնի մեր Հայիաց բացին:

Դարմեալ կարող եմք լինել նորան սիրելի, ինչնուր:

Վարժարաններն ծաղկին՝ մանկունք լի ուսմուլ:

Զի դանդաղն հետ մնան՝ հետեւին նորա ջանքով,

Յայնժամ բարին մեր մէջն կ'ընալի միշտ սիրով:

Տեսմեն արդիօք լինինից նորան կցսնկային մեղմից,

Թէ յօժարեն կատանան բամին Հայերն Պարսից:

Յայնժամ անհամեր սրտով կճայնեմ ես այս տեղից,

Առէր, եղբարք, դուք ձեզ մաս՝ մեզ շատ հարկ է նորանից:

Ո՞գ հայրենակից եղբարք ձեռ ձեռքի տուած ինեմք,

Բարերարէն օգնութիւն ուղիղ սրտով թող մաղթեմք:

Մեղ համար մի միրկութիւն թէ ուղենամք որ դանեմք,

Նոր ժամանակիս համար ուրիշ լիզուներ սովորեմք:

Մէջնունի պէս սիրահար Խափառեմ Պարսկահայ եմ,

Պտղուելով միշտ կերպեմ աղջի միջումն նոր եմ:

Զիկալ մի մարդ ճարցանէ եւ իմանայ թէ ինչի:

Բժշկեանցն վառուած է ջնորմ սիրով Հայատանի:

Ի ԹԷԿՀԱՆ:

ԱԶԳԱՅԻՆ

Հետագայ յօդուածը թէպէտ անկ բերութեանցն համար) եւ Արարատաց
եւ Հարկ էր ուղղել ուղղակի Մեղու Հայ- խմբագրութիւն զիջանելով համբաւա-
աստանի լրագրոյն եւ ի նմին հրատա- ւոր գրասէրին թախանձագին խնդրա-
րակել, սակայն Մեծարգոյ Յօդուածա- նաց՝ եւ ամեն պատրաստապատճեն լինելու հա-
գրին նամակէն կիմացուի՝ զի Մեղուի լու վերաբեր նոյնութեամբ հրատա- արժան համարեցաւ հրատարակել ամ-
րակելը զլացեր է (աւելի վերջին սլար- սագրոյս մէջ:

Պ. Ա. Տ. Ա. Մ. Ա. Կ. Ա.

«ՄԻ ՔԱՆԻ ՆԿԱՏՄՈՒԽԻՔ» ՅՈՒԹԻԱԿԵՄԻՆ:

Իւնակրուուի այն սովորական ձևն՝ որին դժբախառար ընտելացել է մեր հասարակութիւնը, — բնականապէս անձնականութիւնի է տանում, որով զրականութեան պատկառելի ասպարէզը հայշոյանքի և յիշոյների ասպարէզի է փոխարկվում։ Ուեւ ևս խորչվում էի մեր պարբերական և օրազրական զրականութեան մէջ մոտած մոլութիւնից, որով իւրաքանչիւր զրագէտ յաղթուած է համարվում՝ եմէ այսօր չէ պատասխանում հակառակորդի երէկուան խօսքերին, որքան և նրանք յիմար և անհիմն ևս լինէին, այսու ամենայնիւ այսօր ևս ստուգուած պարտաւորվում եմ համերէս դուրս զալ։

Ըստ 1877 տի «Մելու Հայատանի» լրագրումը (թ. 26) հրատարակուած մին քանի նկատմանք, «վերնազրով և Շ., ստորագրութեամբ յօդուածի հեղինակն առանց որ և իցէ իմ կողմիցը նրա անձնաւորութեան կամ ազգաբանութեան շշափելոյ՝ անդուսպ կըքով յարձակուել էր իմ վրայ, ևս եւս մինչեւ ցայսօր որոնում էի իմանալ Շ. տառով ստորագրողի ով լինելն և ապա պատասխանել։ այժմ հաւասարի եղայ, որ յօդուածագիրն է զերազնիւ Պ. Յարութիւն Շահաղիղեանցն, որ իր անունը ծածկելիցն ենթաղրում է թէ ինքը յօդուածագիրն էս համողուած է եղած իր յօդուածի անհիմն և թերուղիով լինելուն, որ ահիցը չէ ստորագրել իր անունը և աղ-

գանունը, քանզի նա Պ. Արեցեանցի հեղինակութեան մասին ինձ է հայշոյում։

Մէկ հարցնող ըլնի Պ. Յարութիւն Խանդովեանց՝ Շահաղիղեանցիցը թէ իմ 400 կամ 9200 ունեցած թղթակցութիւնների որբանութիւնը սուտ էր թէ ծշմարիտ, կորած էին թէ չեն կորած, իսուսն էր տուել թէ հառն, արգեօք ինչ կըխալիկական յարաբերութիւն կամ վերաբերումն ուներ հանդուցեալ Անրսէս Կաթողիկոսի մանկութեանը կամ պատանիկութեանը, որ նա ինքեան նիւթ շենելով իր յօդուածումը պատ անդ ոստուաելով, երկարօրէն խօսում է առանց որ ևիցէ զրաւոր փաստեր առաջ բերելու։ Վանդապետ Պ. Օ. աքար Շահաղիղեանցը լիզու էլ ունի զրիւ էլ, նա աւելի լաւ ես կարող էր իր զիտեցածը օրագրով հրատարակել, էն ժամանակն ես ևս եմէ իրաւացի ազգայուցութիւն ունեին նրան կպատասխանեին վասն որոյ այժմ թաւադ՝ կնեազ Յարութիւն մականուանեալ Կամարականի զրոյցի վրայ յինուեիլու էս առարկայի վրայ նրան պատասխանելը ես աւելորդ եմ համարում։ Բայց Պ. Յարութիւնն որ իմ էնքան թղթակցութիւններ օրինակելու համար անուանում է ինձ ծաղրաբանելով՝ «Յայսմաւուրք զրոյց», ես էս վիրակոչումն ուրախութեամբ եմ ընդունում, քանզի ամեն ուսումնական անձն՝ նրա էնգէս զրելցն իսկոյն կընախազուշակէ, թէ նա ինչ քոստ խելքի տէր է եղած, ի հարկէ եմէ ես ևս ուրիշների նման զրագուէի ազգականների և զերդառապանների անդամների մէջ բանարկութիւններ քսութիւններ սերմանել, նրանց կոռւացնել ու օգուտ-

ներ քաղել, անշուշտ չեմ արժանանալ
« յայտաւուրք զբող » վերակռման։
Եթե մեծապատիւ Պ, Երիցեանցն Պ.
Յարութիւնից ստանալով Խանդուլեանց
— Ծահազիզեանց-Կամարականների ազ-
գարանութեան կոնդակի պատճենն (որ
և ոչ թէ չեմ կարդացած մինչեւ « Խռամ-
սեայ Փորձ » հանդիսի ԱՌ համարումը հր-
բատարակութիւնը նաև բած ևս չեմ թէ
կայ մէկ Էնպիսի կոնդակ) և նրա նախա-
դասութիւնների մէջը յիշուած և սառ-
բազրուած անձանց վրա իր բազմակողմա-
նի և հեղազոյն դասողութիւններովը քին-
նէ, յօշոտէ, և նոյն Խանդուլեան — Ծա-
հազիզեան վերանուանեալ Կամարական
Կերսէս Կաթուղիկոսի թղթակցութիւն-
ներովը հերքէ, ջրէ կամ վաւերացնէ, ար-
դիօք ինձ ի՞նչ վերաբերումն ուներ, և
կամ Պ. Յարութիւնն ի՞նչպէս էր ներում
բնիքեան ասել թէ՝ Պ. Երիցեանցը Ծիր-
մազանեանցի պատճեններովն է Էնպէս զա-
տել և քննել։ Խսպիսի անցքի համար
շատ յարմար է առաջ բերել ազգային
հնաւանդ առածքը թէ, մի մարդ քար ձր-
զեց պարոն ինքին, պարոն ինքը չկարողա-
նալով քար ձգողին մերձնեալ և վնասել,
քարը բերանը առաւ ու զզզեց։

Ծատ ասութեան Պ. Երիցեանցին որպէս
այլք, նոյնպէս և ևս և. Պ. Յարութիւնը
Կերսէս Կաթուղիկոսի կենսազրութեան
մասին նրան դրաւոր նիւթեր ենք ընձե-
ռած։ Այժմ ինդիրը սորանում է թէ,
արդիօք ի՞նչ նպատակաւ է. Պ. Յարու-
թիւնը տուել և ի՞նչ նպատակաւ ևս։
Ես հրապարակաւ խոստվանուում եմ,
որ իմ նպատակն եղել է հանգուցեալ
Կերսէսի քաջ հայկարան զրչեց դուրս

եկած, լեռը ազգային պատմութիւններով,
քանի մի հազարական նամակներից մօսա
մացեալներն, որ 1873 թուին յանձնել
էի Պ. Երիցեանցին, որպէս զի նրանցից
օգուտներ քաղէ և թերեւ ժամանակաւ
էլ հրատարակէ, որ միւսների նման տա-
րադէպ պատահմանք անյայտ չլինին։ Իսկ
թաւագ—կնեազ Յարութիւն Խանդու-
լեանց — Ծահազիզեանցի նպատակն ինչ
է եղել, ասենք։

Անմահ Կերսէսի անունը լաւ կամ
վաս հրատարակուէր, արատաւորուէր,
արհամարհուէր, ոչինչ նշանակութիւն
չըր ունենալու Պ. Յարութիւնի համար՝
եթէ ոք ձեռնամուխ չլինելու Խան-
դուլեան — Ծահազիզեան — Կամարա-
կանների ազգատհմի կոնդակն։ Արա ան-
հերքելի ապացուցութիւնն է 1875 ամի
« Արշալոյ Արտաքան » օրագրի միջո-
ցով հրատարակուած հետզիւտէ երկար
յօդուածը « Օպղիաքաղի իշխակատար կեն-
սազրութենէ Կերսէս Ա. կաթուղիկոսի
ամենայն ձայոց վերնազրով, և ապա
նեարակներ կազմուած ու ցրուած։ Աս
յօդուածի հեղինակն էր ծերունի ։
Գարբիել Պատկանեանցն, որ զովելով,
ներբողելով, բառարանիցն ինչ շքեղ —
հրաշալի ածականներ ասես, ընարելով,
ընձայել էր Ծահազիզեանց երեակայա-
կան Կամարականների ազգատհմի ան-
գամներին, և նրանց ծաղումը տարել
հասցրել էր Արշակունի թագաւորող սե-
րունդին։ Ծատ լաւ, բայց։ — Ահա էս
բայցումն է խօսքը։ — Իսայց անմուանալի
Կերսէսին ընձայել էր վերակռումներս
առնել Երաւանց հետ խախող, աղբաղետա-
բառածան, յա-կունական վնասապարոց, և ա-

յոց եկեղեցայ հիմ գրտող, Արդունեաց չուլսէի կանուզի հիմասացածին նիւնաւորով, աւետոր, ստուա, խաճող Աշտարակից, նուրուսու, հաւապառադրաստ, մասնիւ հայրենեաց ելն ելն:

Սպաքէն եթէ Պ. Յարութիւնի սրբառումը փոքր ինչ բարի նախանձի շնորհապարտութեան և երախտազիտութեան նշյլ կար, նա պարտաւոր էր իր և ուրիշների մօտ եղած դրաւոր նիւթերը ժողովել, նախ ինքն՝ եթէ կարողանար, ապա թէ ոչ, յանձնել էր մի ուսումնականիու ու խնդրել էր, որ զոնէ նա էր հերքել «Օազիաքտղի» մ.ջ հրատարակուած անհիմն կարծիքներն և ենթադրութիւններն Քայց, — գործեալ քայց... Պ. Յարութիւնը էս չարեց: — Խչի՞: Որովհետեւ կաղաքառուէր, կարտաւորուէր, կը հերքուէր նըրա երեւակայական փառացի թագաւորացն և նախարարական ազգատոհմից ծագումն: Եւ աժմ էս եթէ Պ. Արիցեանցն ինչպէս հաշած ել էր ընդունել թաւադ — ինեազ Պ. Յարութիւն Խանզուլեանց — Կահազիկեանց — կամստրականի առւած իր ազգաբանութեան կոնզակին, ի հարկէ չը բունուիլ «Մեղու Հայաստան» օրագրի էջերումը նրա անհիմն և անհամ յօդուած:

Պ. Արիցեանցը Ներսէսի կենսազրութեան մ.ջ (IV եռամսեայ «Փորձ հանգիստումը») ասում է թէ բերանացի տեղեկութիւնները Յարութիւն Կահազիկեանից, Գալուստ Շիրմազանեանից և այլոցից է ժողովել: Սպաքէն Պ. Յարութիւնը ինչպէս արդեօք մարզարէացաւ որ հեղինակի դատողութիւնները կոնզակի մասին՝ հեղինակի մտաց ճնունդ չէ, այլ

թէ Շիրմազանեանցի ներշնչութեանը և ապա դեղութեանը է եղած: Պալսումը խելք ունեցող մարդի՝ արդեօք կը ներեր ինքեան, որ կարծիքական երկմտութիւնից և նախանձի կը քից սափուած մեծապուռն բերանով էսպէս ենթազրելով այլոց վերայ յարձակուէր: Էս եզանակ վարուիլը միայն միմիայն երեւակայեալ թաւադ — կը նեազ մարդու խելապատկիցը կարտազրուի և կը ցնդուի:

Պ. Յարութիւնն իր յօդուածումն աւերացնում է թէ, իրը եմ իմ գործքովն և ընթացքովը չեմ արժանացած հասարակաց հաւատարմութեանը: Այժմ աեսնենք թէ էս զրողն իր զործովն ու ընթացքովն արժանացել է արդեօք հասարակաց հաւատարմութեանը: — Չէ, զործեալ ես արժան չեմ համարում իմ զրչնչ որ այլոց վատ համբաւները հրատարակէ, ժամանակն ինքն կը խօսէ: Քայց ասենք Կահազիկեան — կամստրականների ազգարանութեան մասին, որ մեր դիւրահաւան սոսիի բուն նպատակն է, վասն որոյ և երուած, խորովուած, փմովուած, թը թուած սրտով յարձակուել է իմ վրայ ասելով թէ իրը թէ ես նախանձ և առելութիւն ունիմ ընդդէմ Կահազիկեանց ազգատոհմին: Խչի՞ համար է նա էսպէս երեւակայում, ինձ յայնի չէ: Անշուշտ ինչպէս բարի մարդը կը կարծէ, որ ամենայն մարդ իր նման բարի կը իմի, նյոնպէս նախանձու, սխակալ, քսու և բանարկութիւններ սերմանողն՝ ուրիշներին իր նման կերեւակայէ: Այսու Արովհեան Պ. Յարութիւն Կահազիկեանցն այժմ սախուց ինձ ձշմարտութեամբ և անկիր մաօք պատմել էն՝ ինչ

որ մինչև ցայսօր ոչի չել յայտնել, ուրեմն ասենք, բայց խճարհար խընդրում եմ նրանից, որ ինչպէս «Մեղու Հայաստան» օրագրի 26 համարի թերթը (որի մէջ իր հրատարակած յօդուածըն էր) ծոցումը ղրած՝ ինքեան պատահողներին տալիս էր կարդալ, կամ ինքն էր փողոցներումը կամ խանութներումն այլոց համար կարդում կամ հրաւիրում կարդալու, էսպէս էլ չանէ էս իմ յօդուածի թերթի հետ։ Այժմ խնդրում եմ բարեմիտ ընթերցողների ունկնդրութիւնը։

Հանգուցեալ Յօվակիմ և Պ. Յարութիւն Շահազեղեանները 1838 թէ 1839 տմին, իրանց թաւագութեան մասին Քայլ - Ալի շահի շնորհած Քարմանը ուղարկել էին իմ երեց եղբօր վերայ, որ Թափրիզի Առասաց հիւպատոսաբանումը վաւերացնել էինք առեւ։ Այս բայց Քարմանումը Կամարական բառը կարդացինք, կարի զարմացանք, որովհետեւ մինչև էն ժամանակը լրած չենիք թէ, նրանք էսպիսի մէկ նախարարական սերունդից ծագումի պոշտն էին բռնել։ Աշ էսպէս էլ էր, ըստ որում մօտիկ ժամանակներս նրանք սկսեցին ինքեանց Կամարական վերակրօնումն ընծայել — էն էլ ամաշելով, կարմրելով և խրմնելով։

Օիարդ և իցէ, մէք զիմեցինք Ուռասաց հիւպատոսաբանին, որ պատասխանեց թէ, «ինքն չէ կարող մէկ Քարման վաւերացնել՝ որ սրանից 30 — 35 տարի առաջ է զրուած, այլ պէտք է Պարսից զիւանիսանեցը ինորոյ վկայական ստանաք Քարմանի ճիշդ լինելուն» ներկայացնէք հիւպատոսաբանին, որ և համեմատ նրան

ինքն էլ վաւերացնէ։ Մէք ևս զիմեցինք զիւանիսանին, որ Քարմանումը առանց աւելի սխալներ և իրանց լեզուի կանոններին հակառակ գործածուած բառեր և նախադասութիւններ գտաւ։ Եթէ իսկական Քարմանը կամ նրա պատճէնն առձեռն լինէր, զիվանիսանի ասածներից շատն այժմ յուշ կըրերէի, ուրեմն որքան որ մտքումն մնացած են՝ էն ասենք։ Նա ասում էր թէ,

«Նախ» մեր մէջն ինչ հօնչէ (զրագէտ, որ զիւանիսական պաշտօն է) որ առա բառուանուն տայ Հայի, նրա աջ ձեռքը պէտք է կտրած, մանաւանդ որ էս Քարմանի ոծիցը՝ նախադասութիւններիցն և զործածուած բառերիցն երեսում է որ չլով - բազ - խանէի զրագրի գրած է, (Չլօվ - բազ - խանումը զրագիրներ կան, որոնք մէկ փոր չլովի համար՝ ինչ ուղես կըզբեն։)

Երկրորդ՝ Քարմանումը յիշուած բառուան ոչ Արաբերէն է ոչ Պարսկերէն և ոչ Թուրքերէն, և էն պաշտօն է արգեօք, ախտղն է, կոչո՞մն է, արտօնութիւն է, ի՞նչ է նրա նշանակութիւնը՝ մեզ անհասկանալի է, և մեր Շահն ինչ արգեօք իր Քարմանումը այլազգական բառ դործ կածէր՝ երբ իր հապատակին էր շնորհում։

Երրորդ՝ Շահերի Քարմանների քամակին եթէ եօթն կամ զոնէ հինգ վէզիրների կնկքներ զրոշմուած չլինին, էն Քարմանը ընդունելի չէ։

Չորրորդ՝ Քարմանի մէջը յիշուած նախորդ աիրապետողներն երբ և ոյք են եղած, յանուանէ չեն յիշուած, ուրին շննծու է։

Նիսպերորդ՝ Փարմանումը յիշուած այս, եթէ իր նախահաւների կամ իր ծառայութեան մասին մէկ զրաւոր ապացուցութիւն որեւիցէ տիրապետովից կամ Հահի Փարման ունի, թող հիմի բերէ նայենք, հաւաստի անենք, յետոյ էս Փարմանը վաւերացնենք, և լին և լին:

Մեք էլ վերոզրեալ անցքը հաղորդեցինք Պ. Հահաղիզեաններին, որոնք պատասխանեցին թէ, եթէ կարողանաք էղպէս՝ ինչպէս կայ, առանց ինչ հետեանաց, Փարմանը վաւերացնել տաք, մինչև 100 ոսկի էլ մօխէք՝ մէք կրվճարենք, վասն որոյ մէք կրկին անզամ զիմուցինք զիվանիսանեի նոր եկած նախազահին, որ շատ հետաքրքրութեամբ նայեց, նայեց, կրկին - կրկին անզամ կարդաց, շուռ մուռ տուեց Փարմանը, հարցրեց, իմացաւ որ թէ իմիլիսից է առաքուած, ասեց, բարեկամներ, ես ձեզ խորհուրդ եմ տալիս, որ էս Փարմանն ուրիշ մարդու ցոյց չտաք, որովհետեւ լսում ենք որ, ումանք մէկ տեսակ զիղ են հնարել, որով հին Փարմանների, հրամանազրերի, կապալազրերի և մուրհակների մէջ զրածներն էնալիսի վարպետութեամբ են ջնջում, մաքրում ու նոր ինորոյ ինչ ուզում են՝ զրում են, որ զժուարին է լինում առնեն մարդու ձանաշել, և մէք էլ այժմ հետամուտ ենք նրանց շինողներիցը մէկը զոնէ ձեռք բերենք; Թէ՛ւ էս ձեր ներկայացրած Փարմանն էլ շատ կասկածաւոր է երեւում, բայց ըստ որում ոչ որի վեասակարչէ և դուք էլ օտարական և հիւր մարդիք էք վասն որոյ լսու կանէք ուահեք, որ ձեր ուն էլ էսպիսի զործում չիսառնուի; Մեք էլ էն Փարմանը 1842 թէ 1843 թուին

վերադարձրինք Հահաղիզեանց պարոններին:

Երդարև շատ ժամանակ չտեղ, որ մէկ Արեանցի թէ Նախահեանցի միրզա Քեազում անուն Պարսիկ բռնեցին կեղծ թղթեր շինելու համար և առաքեցին թէ հրան:

Եյժմ զանք տսել մեր անձնական համեստ և համառօտ կարծիքը Փարմանի էն տողերի վերայ, որ Պ. Հահաղիզեանցն իր յօղուածի ծանօթութեան մէջ Ուռսերէն թարգմանած՝ վատահութեամբ առաջ է բերում:

‘Նախ՝ Պարսիկները Փարմանի պլխումն այս ինքն սկզբումն երբէք տարեթիւ չեն զրել:

Երկրորդ՝ Պարսիկները լեզուումն Երմենիա բառ չկայ:

Երրորդ՝ Պարսիկներն ինչպէս նա առաջ է բերում, զրուած է իրը թէ . . . Աղա Կարապէտ . . . առ նիշտոյէ (նուզուբայէ) իւ նուստան Երմենիս մը բաշտն, որ բառ առ բառ կրնշանակէ, «աղա Կարապեան . . . յազնուականաց և ի թաւազաց հայոց լինի», կամ թէ Պ. Յարութիւնի պատուի համար ասենք, է:

Իսկ թաւազացեալ Պ. Յարութիւնը Ուռսերէն թարգմանել է էսպիս, . . . Ագա Եարագետ . . . происходитъ . . . изъ поколений Армянскихъ Князей: Էս ևս բառ առ բառ նշանակում է . . . «Աղա Կարապեան . . . ծազում է ի սերենդոց (կնեազից) իշխանազանց հայոց»:

. . . Եմեն ընթերցող կրահանէ թէ, ինչ անհեթեթ զանազանութիւն ծազեց Պարսիկներից Ուռսաց լեզու Պ. Յարութիւնից թարգմանածի մէջ:

Է. Ու հանգուցեալ Կարապետ աղջին, ոչ նրա հայրն, ոչ պապն և ոչ նրա նախահաւներն, ինչպէս և կոնդակն ու ֆարմանն էլ ցոյց են տալիս, Վրաստանցիք չեն, որ նուառ տիտղոս էին ունեցել. ապաքին թաւադ բառն ի՞նչ արդեօք նըշանակութիւն կունենար Պարսիկների կամ Հայերի համար, որոնք էն բառի նշանակութիւնն ամենին չեն հասկանում:

Դ. Երգեօք կայ մեկ օրինակ, որ Շահների Փարմանովը մի ոք, կամ թէ կուզես մահմետական տիրապետող խաներիցն լինենին, որ կնեազութեան տիտղոս ստացած լինի Ոսուաստանի, թէ կուզես ասա Վրաստանի մէջ, որ ըստ մեծի մասին հարկատու էր Պարսից:

Ե. Եւելի զարմանալին էն է որ, Թաթ-Ալի շահը շնորհում է աղա Կարապետին Վրացերէն ախտղոս 1220 Նիշըն՝ այս ինքն 1805 ամի Տեսառն, այն ի՞նչ Վրաստանը հինգ տարի առաջ արդէն միաւորուած էր Ոսուաց կայսրութեան հետ, ուրիմն չէ կարելի ասել որ, Շահն էնքան ագէտ էր, որ հինգ տարի առաջ իր արդապետութիւնից դուրս եկած երկրին միմայն պատկանեալ տիտղոսը՝ շնորհում էր մէկ Նայի, որ իր հպատակն էր: Երգեօք սրանում մէկ լցոնից կայ. թող պատասխանէ Պ. Յարութիւն Շահազեղ-իանցն:

Զորբորդ՝ Գաթ-Ալի շահը 1805 ամին եկած Երևան Ոսուաց հետ պատերազմում էր, ամօթ չենի հարցնելն թէ, էն նեղ և անձուկ ժամանակումը շահն ի՞նչ տեղաց, ի՞նչ արխիւից, ի՞նչ մետրիքական մասնից (որոնք Պարսիկներին մինչեւ ցայսօր անձանօթ են) վերահասու եղաւ-

թէ, նախ 650 և յեաց 350 տարի իրանից առաջ, Նախարարական Կամուրական տոհմիցն Մարգար և Մանացական անունով ունանք՝ Շօրակիալ զաւառին տիրապետողներն են եղել և իր ժամանակակից ոմն Յարութիւն սերուած էր էն տոհմիցն: Բաց իսոցանէ, եթէ Շահը շիմացաւ և չմիշեց իր Փարմանումն, որ Մարգար ոմն ծառացել է Քահան - շահն՝ Շահազեղ վերակոչմամբ, և Թորոս ոմն Խաղուրին՝ Խան - զուլի վերակոչմամբ, ապաքին Եջմիածնի կաթողիկոսները, միաբանութիւնն և մելիքներն ի՞նչ տեղաց իմացան ու մի և նոյն ժամանակն էլ աւելացրին ոմն Կերսէս անուն ու Ելեւէլ էլ Խան բառերն էլ նրա պոչեն կպցրին:

Նինզեղրորդ՝ Փարմանումն, ինչպէս Պ. Շահազեղեանի Ոսուաներէն թարգմանութեան մէջ զրուած է թէ, . . . Սղա Կարապետ որդի Յարութիւնի ևլն, արդեօք ի՞նչ՝ Յարութիւն քահանայի որդի չէ զրուած, այն ի՞նչ նորա հայրն էն ժամանակն արդէն քահանայ էր: Լսակէս զրելումն էլ միոք կայ:

Փոքը ի՞նչ էլ կոնզակ - վկայականի վերայ խօսենք: Կորա մէջ ասած է, « Աշտարակցի իշխանազն Պարապետ (սրան հեթանոս Շահը երեք տարի առաջ Աղը պատուանումն էր շնորհէլ, իսկ մեր չկամ և մախացող հոգեորականներն և մելիքները զւանում են) Տէր Յարութիւնեան, . . . նախնիք սոցա Կերսէս անուն (Եղբ) երեկի իշխան ի Շիրակաւան, յաղգէ Կամսարականաց (առ քեզ տրաքոց) . . . ի զօրանալ իշխանութեան Խամթարաց ի յԱնի (1165 ամին) որդիք որդւոց նորա Մանացական և Թորոս, . . . զնան ի Մայ-

բաղում . . . յայնժամ և երեք եղբարք յարգւոց Վնացականին . . . երեց որդին, որոյ անունն էր Մարգար, զնայ առ Քահան - շահն (1455 - 1465 ամին) որ նատեր ի Դավթէմ . . . և ինպրէ ծառայ յել ի դրան նորա (ընդ հակառակն սրանց համար Փարմանումն ասած է ինքնազլուխ տիրապետում էին Շօրադեալն) . . . և այնքան հաճելի լինին (ինչո՞վ)՝ մինչեւ ի բաց թողեալ զանուն Վարդար, կոչեն զնա Շահազեղ (զարմանալի ճիշդ ապացուցութիւն է) . . . երկրորդ եղբայրն նորա Թորոս անուն մտանէ ի ծառայութիւն Երեանայ իշխանին, որ անունն Եաղուր . . . և լինի սիրեցեալ յԱշադուրայ (1478 ամին) . . . կոչեն զնա Խան - զուլի (ի՞նչպէս էս երկու եղբօրն էլ պատահեց անուանափոխութիւն; Եյտու ամենայնիւ ի հարկէ Ք - հան - շահիցն և Եաղուրիցն զրաւոր ապացուցութիւններ կունենայ Շահազեղեան - Խանզուլ - եանց սերունդն) . . . որ և այս Խան - զուլի փոխազրեալ զընակութիւն և զընտանիս իւրեանց յայնկոյս գետոյն ի գիւղն Եշտարակ (կարծեմ Փարմանումն էս բառս ըընի) . . . և վասն այսր փոխազրութիւնն մինչեւ ցայտօր ժամանակի (ի՞նչ անհերքելի ապացուցութիւն) սերունդք երից եղբարց նոցա յանուն փոխազրողին իւրեանց անդէն յԵշտարակ Խան - զուլի + ասէին են: « Էս վերջին կոչումը ճշմարտանման է: Ճա՞ ինչը՝ արդեօք էս սերունդը Խանզուլեան կոչումը խոտելով, կէս դարից աւելի Շահազեղեանց բառս էր սեփականել ինքեանց: »

— Եշտարակ այնուհետեւ: — Ել ի՞նչ այնուհետեւ, կերաւ խարխսէն, խեծաւ զեշ,

մի՞թէ չկարզացիր վերոյիշեալ ֆարմանն և կոնդակը, նրանցով Պ. Յարութիւնը դառաւ թաւաղ - կնեազ ու բանը վերջացաւ:

ԶԵ՞ պարէն, եղ քո բանի մշն ուրիշ բաներ էլ կան, լու: 1165 թուիցը մինչեւ 1478 թիւն և 1478 թուիցը մինչեւ 1805 կամ 1808 թիւն, երբ Փարմանը կամ կոնդակ - վկայականը զրուած են, նախ 300 և ապա 330 տարի ժամանակամիջոցներում, այս ինքն իշխան և ինքնազլուխ տիրապետող Ներսէսիցը մինչեւ թաւաղ կնեազ Շահազեղն և Խան - զուլի Կամարականներն, և սոցանից մինչեւ Տէր Յարութիւնը, ո՞յլք էին մին զմինից սերուած և ի՞նչ էին նրանց անուններն: Ի հարկէ նրանք ճրագներ չէին՝ որ վշէիր ու յանկցնէիր, և հարիւրաւոր տարիներ յանկած և անձնունդ մնային, ու յետոյ ծծումքով, երբ կամենայիր, վերսախն վառէիր որ ծընէին:

— Պ. Յարութիւն Շահազեղեանցը միւս կողմիցը սաստում է և ասում թէ, բանը շատ չեն քրքրել, ապա թէ ո՞չ կուռչեմ, կը խռովիմ, կը նեղանամ ու վրեդ էլի հայ հոյանքներ կը հրատարակեմ: Մուկը էնքան փորեց փորեց, որ կատու դուս եկաւ: Լաւ է լաւ, լու:

— Եւքիս վերայ, եղ մասին կը լոեմ, բայց միւսի մասին լուել անկարելի, ապաքէն խնդրեմ լսել: Անեազ - թաւաղ Պ. Յարութիւն Շահազեղեան - Խան - զուլեան Կամարականը վարպետութեամբ մեկ ուրիշ հոսով խունկ էլ է ծխում իր յօդուածումն, որպէս զի միամիտ ընթերացողներին զինաւորէ ընդդէմ ինձ: Եհանորա բառերն « Պալուստ Շիրմաղան -

եանն չէ խնայել հանգուցեալ ։ Աերսէսի, Դանիել և Արքեմ կաթուղիկոսաց, 10 եպիսկոպոսաց՝ 2 աւագ քահանայից և 5 մելիքաց յիշատակը սեացնել և նրանց անունների վերայ սե արատ դնել և դուրս հանել նրանց իշտակ խաղբախ՝ ստախօս և ուշու-՛լեան ընտակար անջն+ . . . (๘๙):

Ո՞ր տեղ էր արդեօք Գալուստ Շիրմազանեանն էդ անձանց վերայ էզպէս բառներ ասել կամ զրել, թող ցոյց տայ Պ. Յարութիւն Շահազեղեան ճշմարտախօսն: Էս խոշորութեամբ զրպարտողին, զրախօսին, համարձակվում եմ ասել ան — ին, — ան — ին, ի՞նչ արդեօք անուն տամ: Եթէ էդ պարոնը ցոյց տայ որ, Շիրմազանեանի ստորագրութեամբ կամ անունով մինչև ցայսօր էն կոնդակի մասին կամ նրա մէջ յիշուած հոգեորականներին (բացի սրանից որ կարդում էք) մի յօդուած կամ զրուած ուր ուրեք հըրատարակուած լինի, էն ժամանակը նրան ընծայած ածականներն իմ վերայ կառնեմ: Խսկ եթէ նա չապացուցանէ, ի հարկէ էն ժամանակը նա ուրիշ լաւ - լաւ ածականների էլ արժանի է, որ այժմ խնայեցի ընծայիլ:

Պ. Յարութիւն Խոան - զուլեանցը, մեղայ մեղայ, Շահազեղեանց Ամանարականը էնպէս զրելով արդեօք նախանձախնդիր է «Ներսէսի, Դանիելի և Արքեմ կաթուղիկոսաց, 10 եպիսկոպոսաց, 2 աւագ քահանայից և 5 մելիքաց» անուններ և պատուին, թէ զրգուուած իր ազգարանութեան կոնդակը հերքելու հաշմար է էսպէս զրում: Էս էլ մէկ տուտուց հարց է անինք: Կոնդակ - վկայականի որ-

խաներ հանեին*) արդեօք տէրութեանը ի՞նչ վկասակարութիւն կար, ինչպէս նազրում է: Յետազայ ապացուցուած անցքիցն ամեն ազնիւ սիրտ ունեցող հայր կը զուշակէ թէ Պ. Յարութիւնն ի՞նչ պէս հայոց օրինաց և անուանը նախանձայոյդ և ազգասէր անձն է:

Ա. Եջմիածնի Ամնողի Պօլօժենիի մէջ զրուած յօդուածի մասին թէ «մեր կուսակրօն հոգեորականների կայքը նրանց մահուանից յետոյ պէտք է ժառանգեն նրանց ազգականներն», Հայոց բոլոր ազգը 40 տարիէ հետէ բողոքում է, խնդրում է թէ, այդ կանոնը ընդդէմ է մեր դարաւոր սրբազնացեալ եկեղեցական կանոններն: Ներսէս կաթուղիկոսը հաշտարիսանի վեճակաւոր Աերովէ եպիսկոպոսի կայքի համար դատարաններումը վէճ բացեց, քանի քանի տարի աշխատեց, մինչև որ համեմատ մեր ազգային նուիրական - եկեղեցական կանոնների հաստատեց եկեղեցական օրինաւոր ժառանգութիւնն ու մարմնաւոր ժառանգք չկարողացան տիրել էն եպիսկոպոսի կայքին: Վիւնոյն տիտուր վեճակի մէջ ձգեցին և ներկայ Ա. Հափառ Հայրապետ Տ. Տ. Գէորգ բազմարդիւն Ամթուղիկոսին. քանզի Ներսէս Ամթուղիկոսի մահուանից յետոյ, նրա եղբօր որդի Պ. Յարութիւն Շահազեղեանցն իրեն ժառանգ հանգուցելոյն, վէճ բացեց թէ,

(*) Այս առթիւ կարեւոր է յայտնել ի զգուշութիւն ամեննեցուն, որ խարդախեալ կոնդակմեր ևս կըդուուին՝ որք ըստ մեծի մասին ցեղարանութեանց եւ կամ մարդացկանութեան համար են:

Ներկայ Վեհ. Հայրապետ օրով մի քանի հատը ծերուեցաւ եւ պատառուեցաւ; Ե. Խմբ:

Ներսէսի անունով՝ Թափլիսումը շինած տունը, նրա ծակատի աղամանդեայ խաչն, մատանիքները, կուրծքի վերայ կրած շքանշաններն (որոնք պարզեւուած էին Օդուտափառ. Ոռուսաց կայսերներից) կպատկանին ինքեան Պ. Յարութիւնին են: Մեք արդարեւ շատ Կաթուղիկոսներից եւ պիտիուպոններից և վարդապեաններից աղքաս և անբարոյական աղքականներ ունեցել ենք, բայց մեր պատմութեան էջերումն ուրեք չենք կարդում, և ոչ էլ տեսած ենք կամ լսած, որ նրանք ժառանգութեան երբ և իցէ վէճ բացած լինին: Խսկ բարի ժառանգ Պ. Յարութիւնը կամեցաւ Թաղդէս առաքեալից, սուրբ Գրիգոր Լուսաւորչից սկսած մինչև Ներսէս Ե՛ Կաթուղիկոսներից և բոլոր աղքից սրբագրացրած սուրբ Վթոռի և նրա վեհապեանների իրաւասութիւնը հերքել: Երանի թէ այժմ՝ Ներսէսը վերակենդանանար, տեսներ որ իր սիրելի եղբօրորդին մերժում է սուրբ Էջմիածնի և նրա Հայրապեանների օրինաւոր ժառանգութիւնը: . . . Խ նչ էք կարծում ին ժամանակն Ներսէսն ի՞նչ կաներ:

— Ենշուշտ նա իսկ և իսկ Հարաժարիմք . . . կասէր, սրտաձաք կը լնէր ու վերըստին կը մեռնէր:

— Եզ թողնենք, յետոյ, ին ասա՛: — Էլ ի՞նչ յետոյ. Ոռուսաց դատարանները, տան վէճը մերժեցին, իսկ միւսների համար վճռեցին թաւաղ — ինեազ Պ. Յարութիւնի կողմն և վճռաղիք տուին նրան: Նա էլ վճռաղիքը յանձնեց ոստիկանութեան աեսուցն, որ զնայ սուրբ Էջմիածնին, պահանջէ Պ. Եհափառ Հայրապեանիցը կամ Ամեողիցն, եթէ նրանք զլտնան

վերադարձնել հանգուցեալ Ներսէսի կրած զարդերն ելն, էն ժամանակն սուրբ Էջմիածնումը զանուած ուիէ, - արձաթէ սուրբ մատունքների տուփերն, օծած խաչ և խաչվառները, քշոցները, թաղերը, վականները, զաւազանները և այլն և այլն՝ ինչ որ զտնէ, աճուրդով վաճառէ, նրանցից զյացած զրամը բերէ վճարէ ինքեան Պ. Յարութիւնին: Դէ՛, եթէ Պ. Յարութիւնը խօսք ունի սրա առաջին, թողարք:

Պարոն ընթերցողներ տեսէք, նա՝ որ իր բարերար հօրեղբօր անմահ՝ Ներսէսի անունը արատուելոյ համար լուել էր, նա որ աղքային Վթոռի սրբազան կայքին չէ խնայում աճուրդի հանել, այժմ իր աղդաբանութեան կոնդակը ջրելոյ համար հրապարակաւ նախանձախնդիր է հանդիսանում Կաթուղիկոսների, եպիսկոպոսների, քահանաների և մելիքների անուանը և պատուին: Կապիսի մարդկանց շինծու կոնդակ - վկայականներ ներկայացնելու համար, Ոռուսաց տէրութիւնն, ըստ նախագուշակելոյ նոյն խակ Ներսէսի, ի վերջը իր օրինաց կոճղե մէջ արձանազրեց որ, այսուշետե չընդունուի Կաթուղիկոսների տուած վկայականներն որ և իցէ մարդու ազնուական առհմից ծագման համար, այժմ՝ միենոյն մարդիկն՝ ուզում են զարիրով սրբազնացրած ժառանգութեան կանոնն եղծանել: Խն մարդն որ չէ խնայում բոլոր իր աղջիք սուրբ Վթոռի պատկանեալ նուիրական կայքը վաճառել առլու, էսօր աղջասէր հանդիսանալով, համարձակում է իր յանցանքն վարդուրել ու ուրիշներին մեղաղել, ինչ ողէս մածնակեր կապիկն: Կան մարդիկ,

որոնք կարծում են թէ, պատմութիւնն
էլ կը խարուի. — քաւ լիցի, — պատմու-
թիւնը շուտ թէ ուշ, ամեն ինչ անաշա-
ռութեամբ քննելոց է և դատելոց, որքան
և մէք ժամանակակիցներս գուն գործնքը
չարն բարի՝ և բարին չար հանդէս դուրս
բերել:

Գույքան գույքան է եւ անունն անունն է.

Ե 29 Յ-Ն-Հ-Շ-Հ 1878 Դ.

Թ.Հ.Հ.:

Այսուհետեւ Եկեղեցի Հայաստան-
եայց այսպիսի գատերէ ազատ է, որով-
հետեւ Վեհ. Հայրապետի ջանիւք եւ
առաջարկութեամբ՝ կուսակրօն Եկեղեց-
ցականաց վերաբերեալ ժառանգու-
թեան օրէնքները փոխուեցան, եւ այ-
ժը կուսակրօն Եկեղեցականաց ժա-
ռանգներն են Ս. Եջմիածին եւ վահօ-
րայք — ուր որ Միաբան ձեռնադրուած
լինին, — ինչպէս նորահաստատ կանոն-
ներով իմիասին աւելի պարզ եւ ընդար-
ձակ տեղեկութիւն հրատարակուած է
Արարատ ամսագրոյս 1871 ամի (Զորորդ
շրջանի՝ թ. Ա.) Մայիսի թերթին մէջ
յերեսն 49:

Ի Մ Ա Տ Բ Ո Ս .

Պարսկաստանի եւ Հնդկաստանի վի-
ճակին Հայոց Առաջնորդ եւ Ծ. Նուի-
րակ Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս ի
47/29 անցեալ Նոյեմբերի Կալկաթայէն
մեկնելով՝ ի 24/5 Դեկտեմբեր ամսոյ Հա-
սած է ի Մատրաս՝ տեղւոյն Հայկական

փոքրիկ Հօտին այցելելոյ եւ դայն մխի-
թարելոյ համար, ուր եւ արժանառու-
յարգանօք եւ սիրով հիւրընկալուած է:

Աւելի ընդարձակ եւ կարեւոր տեղե-
կութիւնքը՝ ինչպէս Հնդկաստանու եւ
Չինաստանու այլ տեղեաց՝ նոյնպէս
Մատրասու Հայոց վերայ տակաւին ստա-
ցած չինելով՝ — որ եւ այցելութեան ա-
ւարտմանէն զինի պիտի ստացուի, — առ
այժմ այսքանը միայն կարելի է հաղոր-
դել՝ զի երբեմն եռանգուն եւ նշանա-
ւոր Հայոց բազմութեամբ հռչակուած
Մատրասը՝ ի ներկայիս հազիւ Հայուն-
նեւ լուս անձինք ունի, Ա. Աստուածածին
անուամբ մի Եկեղեցի, գրամագլուխնե-
րով ապահովեալ գորոց եւլի, եւ յան-
ցելումն ծագած ազգային գժտութիւնը
եւս՝ ուստի հազարչուն աւելի ուռւբի մսիս-
էն յետոյ՝ հանդարտած է քան զակըն-
կալեալն բարի հետեւանքով:

Գեր. Գրիգորիս Արքեպիսկոպոս ի
21/2 Յունվարի տարւոյս Մատրասէն վե-
րագառնալով՝ չորորդ օրը ի Կալկաթա
հասած է:

ՀԱՇԱԽԵՑՈՒՑԱԿ

ԵԼԵԿՄՏՏԻՑ ԵՐԿՍԵՌԻ ԴՊԲՈՅԱՅ

ՀԱՅՈՅ ԱՍՏՐԱԽԱՆՈՒԹԻՒՆԻ

Ի 1877 Ա.Մ.Բ.

ԽԱՀԱԴՅՈՒՆԵԱՆ ԵՐԱՎԱԿ ԵՀԱԿԴՅՈՅ:

Հոգարարծութիւն Աստրախանայ Հայոց Հոգեւոր
երկուց սեռից գպրոցաց ընդ ամին առարելով
գիտառուու հաշուեցուցակ մտից եւ ծախուց պու-
մարաց իւրոց վասն 1877 անցելոյ ամի, խոնար-